«Շտիգեն» ՍՊԸ
Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

«Շտիգեն» ՍՊԸ պարտատոմսերի առևտրի վերսկսման մասին

Հարգելի՛ գործընկերներ և պարտատոմսերի սեփականատերեր,

Տեղեկացնում ենք, որ 2026 թվականի նոյեմբերի 11-ից Հայաստանի ֆոնդային բորսայում վերսկսվել է «Շտիգեն» ՍՊԸ պարտատոմսերի առևտուրը սովորական կարգով:

ՀՀ սնանկության դատարանում հարուցված գործով (ՍնԴ/6744/04/26) իրավիճակը չի փոխվել: Դիմումը վարույթ է ընդունվել 2026 թվականի նոյեմբերի 3-ին, դատարանը այն դեռ չի քննել ըստ էության, և ընկերությունը սնանկ չի ճանաչվել: Ընկերությունը ներկայացնում է իր դիրքորոշումը դատարանում և գործի հետագա էական փոփոխությունների մասին կտեղեկացնի սահմանված կարգով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գործի շրջանակներում քննվող պահանջի գումարի չափը որևէ ազդեցություն չի կարող ունենալ ընկերության վճարունակության և գործունեության անընդհատության վրա:

Ընկերությունը շարունակում է իր բնականոն գործունեությունը, և պարտատոմսերի սեփականատերերի ու գործընկերների հանդեպ պարտավորությունները կատարվում են:

Հարցերի դեպքում խնդրում ենք կապվել՝

Հեռ.՝ +374 11 23 00 23 .
Էլ. փոստ՝ ceo@shtigen.com

Հարգանքով՝
Շտիգեն ՍՊԸ տնօրեն
Հայկ Շեկյան

2026-11-11 13:21:12 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

11.11.2026թ